ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 թվականի N 1413-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐԴԱՐԱՊԱՏ ԳՅՈՒՂ 12-ՐԴ ՓՈՂՈՑ 59 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՍԼԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԵՎ ՍԻՐՈՒՇ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ԱՎԵԼ ՀՈՂ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի ավագանու 2021 թ. դեկտեմբերի 27-ի թիվ 126-Ն որոշումը, ըստ ժառանգության վկայագրի 30.10.2023թ և Հովհաննես գրիգորյանի 31.10.2023թ. թիվ 6001 դիմումը ՝ և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղի 04-059-0066-0008 կադաստրային ծածկագրում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդթվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ասլի Սարգսյանի, Հովհաննես Գրիգորյանի և Սիրուշ Գրիգորյանի պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղի 04-059-0066-0008 կադաստրային ծածկագրում գտնվող

1000.0 քմ մակերեսով հողամասին կից ավել զբաղեցրած 32.0 քմ մակերեսով հողամասը անհատույց հատկացնել նրան սեփականության իրավունքով:

2.Վերականգնել Ասլի Վահագի Սարգսյանի /ծնված 22.06.1959թ./, Հովհաննես Միհրանի Գրիգորյանի /ծնված 01.02.1955թ./ և Սիրուշ Հովհաննեսի Գրիգորյանի /ծնված 11.03.1986թ./սեփականության իրավունքը Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղի 04-059-0066-0008 կադաստրային ծածկագրում գտնվող գույքային միավորների՝ 1032.0 քմ օրինական հողամասի վրա 1984թ. կառուցված 236.8քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ:

3. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները ենթակա են պետական գրանցման:

4. Ասլի Սարգսյանին, Հովհաննես Գրիգորյանին և Սիրուշ Գրիգորյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Սարդարապատ գյուղում գտնվող 04-059-0066-0008 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, գյուղ Սարդարապատ, 12-րդ փողոց, 59:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար սահմանված տեղական վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

6. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատականկարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. նոյեմբերի 30
ք. Արմավիր